ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/270

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.10.2021թ. թիվ 26/26-1/17124-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատախազության 13.10.2021թ. թիվ 44/10.7/14680-2021 գրության հիման վրա, 20.10.2021թ. թիվ 26/26-1/17124-2021 գրությամբ նախաձեռնել է «Ազուռ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ազուռ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/270 ընթացակարգի շրջանակներում 27.10.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ դատախազության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ դատախազությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.10.2021թ. թիվ 44/10.7/14680-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ դատախազության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար գրենական ապրանքների ձեռքբերման նպատակով «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-21/2» ծածկագրով հայտարարված գնանշման հարցում ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 16-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչված «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի հետ 10.03.2021թ.-ին կնքվել է ապրանքների ձեռքբերման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները՝ էականորեն խախտելով պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետերը՝ ՀՀ դատախազությունը, որպես գնորդ, իրավունք ունի ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի: Ինչպես նաև միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

ՀՀ դատախազության և «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ. կնքված ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-21/2-7 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծվել է Պատվիրատուի կողմից, որի մասին ծանուցումը հրապարակված է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի՝ Ձեզ եմ ներկայացնում «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները և մասնակցի կողմից ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/270 ընթացակարգի շրջանակներում 27.10.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/270 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/270 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ դատախազության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ. կնքվել է թիվ «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-21/2-7» ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 Հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 5000 հատ «նամակի ծրար» A 4 ձևաչափի մատակարարման ժամկետ է սահմանվել 3-րդ եռամսյակը մինչև 31.07.2021թ., իսկ 5000

հատ «նամակի ծրար» A 4 ձևաչափի մատակարարման համար՝ 4-րդ եռամսյակը մինչև 31.10.2021թ.:

3. ՀՀ դատախազությունը «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված 07.10.2021թ. թիվ 44/9-29.21 ծանուցմամբ՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, հայտնել է հետևյալը.

«ՀՀ դատախազության և «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ. կնքվել է N «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-21/2» ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները՝ էականորեն խախտելով պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետերը՝ ՀՀ դատախազությունը, որպես գնորդ, իրավունք ունի ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի: Ինչպես նաև միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ ՀՀ դատախազության և «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ. կնքված ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-21/2-7 ծածկագրով պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման Պատվիրատուի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդող օրվանից»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 08.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.10.2021թ. թիվ 26/26-1/17124-2021 գրությունը, ՀՀ դատախազության 13.10.2021թ. թիվ 44/10.7/14680-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ դատախազության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ. կնքվել է թիվ «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-21/2-7» ծածկագրով ապրանքի մատակարարման գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 Հավելվածի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 5000 հատ «նամակի ծրար» A 4 ձևաչափի մատակարարման ժամկետ է սահմանվել 3-րդ եռամսյակը մինչև 31.07.2021թ., իսկ 5000 հատ «նամակի ծրար» A 4 ձևաչափի մատակարարման համար՝ 4-րդ եռամսյակը մինչև 31.10.2021թ.:

ՀՀ դատախազությունը «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված 07.10.2021թ. թիվ 44/9-29.21 ծանուցմամբ՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, հայտնել է հետևյալը.

«ՀՀ դատախազության և «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ. կնքվել է N «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-21/2» ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները՝ էականորեն խախտելով պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետերը՝ ՀՀ դատախազությունը, որպես գնորդ, իրավունք ունի ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները

խախտվել են 10 օրից ավելի: Ինչպես նաև միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ ՀՀ դատախազության և «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ. կնքված ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-21/2-7 ծածկագրով պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման Պատվիրատուի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդող օրվանից»:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 08.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>10 օրից ավելի,</u>

Այսպիսով՝ համաձայն գործում առկա նյութերի, արձանագրում եմ, որ «Ազուռ» ՍՊԸ-ն իր և ՀՀ դատախազության միջև 10.03.2021թ. կնքված Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետը խախտել է 10 օրից ավելի, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված

խախտում, ուստի առկա են «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.10.2021թ. թիվ 26/26-1/17124-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ազուռ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**